ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

ՀՀ ՏԿԵՆ կարիքների համար կազմակերպված «ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2025/44ՏՀ» ծածկագրով գնման ընթացակարգի* գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ

մեկնարկ՝ 04.08.2025թ.
ժամը 16:00
ավարտ՝ 22.08.2025թ.
ժամը 18:00

Հանձնաժողովի նախագահ՝

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության փորձագետ (հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ)	Նորիկ Մնոյան

Հանձնաժողովի անդամներ՝

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության օրենսդրության բաժնի գլխավոր իրավախորհրդատու (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)	Լաուրա Գևորգյան
«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի ավագ ինժեներ (համաձայնությամբ՝ հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)	Հրանտ Մինասյան
«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի ավագ ինժեներ (համաձայնությամբ՝ հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)	Էդգար Ֆրանգուլյան
«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի ինժեներ (համաձայնությամբ՝ հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ)	Աստղիկ Խաչատրյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գնումների համակարգման և կազմատնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի պետ (հանձնաժողովի քարտուղար՝ ԳՊ/ՄՀՄ)	Զանուշ Հայրապետյան

«ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2025/44ՏՀ» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) հայտերի բացման և գնահատման նիստի օրակարգը

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայությունների գնի վերաբերյալ:
2. Տեղեկություն՝ Ընթացակարգի հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին:
3. Տեղեկություն Armeps (armeps.am) էլեկտրոնային համակարգում հայտեր ներկայացրած մասնակիցների վերաբերյալ:
4. Տվյալներ՝ Ընթացակարգին էլեկտրոնային հայտ ներկայացրած յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին:
5. Տվյալներ՝ Ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ Ընթացակարգի հրավերով (այսուհետ՝ Հրավեր) սահմանված վավերապայմաններին համապատասխան լինելու մասին:
6. Տեղեկատվություն՝ Ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու մասին:

* Սույն գնումն իրականացվում է համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի, 20-րդ հոդվածի 4-րդ մասի, 43–րդ հոդվածի, 44-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի:

7. Տեղեկատվություն՝ Ընթացակարգի հրավերով սահմանված ծառայությունների բնութագրերի վերաբերյալ հիմնավորումների, հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:
8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման (մրցույթի արդյունքների ամփոփման) մասին:

1. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայությունների գնի վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայություններ գնման գինը.

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի գնման գինը	Չափաբաժնի անվանումը
1	14 905 812	**S-9-31,/Հ-42/ (Զառիթափ)-Գոմք-Կապույտ տեղական նշանակության ավտոճանապարհի կմ 0+600+կմ 8+400 հատվածի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություններ**

2. Տեղեկություն՝ Ընթացակարգի հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

2.1 Ընթացակարգի հայտը Armeps (www.armeps.am) էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով բացվել է սահմանված ժամկետում՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետին՝ 2025 թվականի **օգոստոսի 4-ին՝ ժամը 16:00-ին:**

3.Տեղեկություն՝ Armeps (armeps.am) էլեկտրոնային համակարգում հայտեր ներկայացրած մասնակիցների վերաբերյալ

3.1 Սահմանված կարգով ներկայացված հայտերը, որենք ընդունվել են Armeps (armeps.am) էլեկտրոնային համակարգի կողմից և համարվել հետագա գնահատման համար ընդունելի 6-ն են:

3.2 Ընթացակարգի շրջանակներում հայտեր ներկայացրած մասնակիցների տվյալները՝ անվանումը, գտնվելու կամ բնակության վայրը, կապի միջոցները.

№	Մասնակցի անվանումը	Գործունեության հասցեն	ՀՎՀՀ	Էլեկտրոնային հասցե, հեռախոսահամար
1	«Ռ Քոնսալթ» ՍՊԸ	ՀՀ ք, Երևան, Դավթաշեն, Տ.Պետրոսյան փ. 48/7.	01027718	rconsultarm@gmail.com Հեռ.+374 94 099 010
2	«ՍՈՒՖԵՏ» ՍՊԸ	Փիրումյանների 4/3 բն.11.	07404587	sufet16@gmail.com Հեռ.+374 94 60 77 78
3	«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Ավան, Սայաթ-Նովա թաղ. 8	08417251	info@haldi.am Հեռ. +374 91 430416
4	«Արխինեքս» ՍՊԸ	Արմավիրի մ., գ. Փարաքար, Արարատյան փ. 19/1 տուն	01249769	archineqs@mail.ru Հեռ. +374 99 559 855
5	«Հեվառ» ՍՊԸ	Դավիթ Բեկ 7/31	09421326	hrsr1987@gmail.com Հեռ.+374 98 009 150
6	«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ	ՀՀ ք, Երևան, Աճառյան 54բ, 375040	00813453	llcdorproject@mail.ru lil.poghosyan17@gmail.com Հեռ. +374 93 08 17 87

4. Տվյալներ՝ Ընթացակարգին էլեկտրոնային հայտ ներկայացրած յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին

4.1 Ընթացակարգի շրջանակներում մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները.

Չափաբաժին 1: S-9-31,/Հ-42/ (Զառիթափ)-Գոմք-Կապույտ տեղական նշանակության ավտոճանապարհի կմ 0+600+կմ 8+400 հատվածի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություններ

№	Մասնակցի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	2	3	4	5
1	**«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ**	**4 500 000**	**900 000**	**5 400 000**
2	«Ռ. ՔՈՆՍԱԼԹ» ՍՊԸ	4 900 000	980 000	5 880 000
3	«Սուֆետ» ՍՊԸ	5 000 000	1 000 000	6 000 000
4	«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ	5 000 000	1 000 000	6 000 000
5	«Արխինէքս» ՍՊԸ	7 400 000	0	7 400 000
6	«Հեվառ» ՍՊԸ	10 200 000	0	10 200 000

4.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են /ճիշտ են/:

5. Տվյալներ՝ Ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ Ընթացակարգի հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան լինելու մասին

5.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են և համապատասխանում են Ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ՝

✓ ***«Հեվառ» ՍՊԸ-ի*** կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ Հրավերով սահմանված պահանջների նկատմամբ՝

1) Հրավերով սահմանված Դիմում հայտարարությունը (Հավելված 1) կազմված է հրավերի պահանջներին անհամապատասխան՝ ներկայացված է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցված՝ **2023թ. իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը:**

2) Բացակայում է հրավերով սահմանված լիցենզիան

3) Հրավերով սահմանված մասնագիտական փորձառությունը հավաստող տեղեկատվությունը **<u>ներկայացված է ոչ ամբողջական՝ բացակայում են Հրավերով սահմանված հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում տվյալ տեսակի գործունեության օրենքով սահմանված լիցենզիայի ներքո պատշաճ ձևով իրականացրած նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր</u>** (պայմանագրերի, համաձայնագրերի, պատշաճ ձևով իրականացրած լինելը հավաստող փաստաթղթերի՝ արձանագրության,հաշիվ ապրանքագրի պատճենները):

4) <u>Բացակայում է **հրավերով սահմանված հիմնական մասնագետների վերաբերյալ մանրամասն տեղեկությունները**</u> /մասնավորապես՝ պետք է ներկայացվեն անձնակազմի բոլոր անդամների կողմից պայմանագրի կատարմանը մասնակցության հավաստում՝ **<u>հաստատված էլեկտրոնային թվային ստորագրությամբ</u>**, պայմանագրի կատարման համար ներգրաված բոլոր մասնագետների ինքնակենսագրականները՝ **<u>հավաստիությունը էլեկտրոնային թվային</u>**

ստորագրությամբ հաստատված տվյալ անձի կողմից: Մասնագետներից առնվազն թիմի ղեկավարի կամ տեղամասային հսկիչի «Քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ու որակավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 30.11.2023թ. թիվ 2106-Ն որոշմամբ սահմանված կարգով տրամադրված **շարունակական մասնագիտական զարգացման հավաստագիրը:**

✓ **«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտում աշխատանքային ռեսուրսների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Հրավերով սահմանված պայմաններին անհամապատասխան՝ բացակայում է կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին տեղեկատվությունը՝ Հրավերի **Հավելված 1.3-ը**:

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

1) Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով և հիմք ընդունելով արձանագրված անհամապատասխանությունները՝ Ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնել և առաջարկել մասնակիցներին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 3, դեմ-0

22.08.2025թ.-ին ժամը 17:30 հրավիրված նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները:

6. Տեղեկատվություն՝ Ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու մասին

6.1 Ընդունել ի գիտություն, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում արձանագրված անհամապատասխանությունները շտկվել են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում: Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով գնահատման արդյուքները հանձնաժողովը որոշեց մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար:

7. Տեղեկատվություն՝ Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումների, հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

7.1 Օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:

7.2 Սույն ընթացակարգի վերաբերյալ հիմնավորումներ չեն տրվել:

8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման (մրցույթի արդյունքների ամփոփման) մասին:

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

8.1 Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով և հիմք ընդունելով հայտերի գնահատման արդյունքները Ընթացակարգի 1-ին չափաբաժնի ընտրված մասնակից ճանաչել՝ **«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ-ին:**

8.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀօրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը՝ անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր:

8.3 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

8.4 Ընթացակարգի ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 3, դեմ-0

Հանձնաժողովի անդամների ստորագրություն՝

Հանձնաժողովի նախագահ՝	**Նորիկ Մնոյան**	.....
Հանձնաժողովի անդամներ՝	**Լաուրա Գևորգյան**	.....
	Հրանտ Մինասյան	.....
	Էդգար Ֆրանգուլյան	.....
	Աստղիկ Խաչատրյան	.....
Քարտուղար՝	**Զանուշ Հայրապետյան**	.....